Ասֆալտապատվել են 69.300 քմ ընդհանուր մակերեսով **փողոցներ, մայթեր և բակային տարածքներ:**

Սալիկապատվել է 5032 քմ ընդհանուր մակերեսով տարածք, նորոգվել և տեղադրվել են 586 գծմ եզրաքարեր:

Ամբողջությամբ վերակառուցվել է «Երիտասարդական» մետրոյի կայարանի հարևանությամբ գտնվող Աբովյան-Մոսկովյան գետնանցումը:

Վարչական շրջանում հիմնանորոգվել են

- Սպենդիարյան փողոցը. ասֆալտապատվել է 2300 քմ մակերես, որից 305 քմ՝ մայթեր, նորերով է փոխարինվել 284 գծմ եզրաքար
- Արամի փողոցը. ասֆալտապատվել է 2000 քմ մակերես, որից 400 քմ՝ մայթեր, նորերով է փոխարինվել 220 գծմ եզրաքար
- Քոչինյան փողոցը. ասֆալտապատվել է 1500 քմ մակերես, որից 450 քմ՝ մայթեր, նորերով է փոխարինվել 150 գծմ եզրաքար:

Վերանորոգվել են Սարալանջի մայրուղու և Իսակովի պողոտայի հենապատերը:

Վարչական շրջանում ստեղծվել են 8150 քմ ընդհանուր մակերեսով նոր **կանաչ տարածքներ:**
Տնկվել է 4230 ծառ, շուրջ 123000 ծաղկասածիլ ,
87000 կակաչի սոխուկ և 1070 թուփ:
Իրականացվել է շուրջ 4175 ծառի սանիտարական էտ:
Վերանորոգվել և անցկացվել է 4025 գծմ երկարությամբ
ոռոգման ցանց,
փոխարինվել են փականները,
ներկվել են խողովակները:

Վարչական շրջանի 56 շենքերում **վերանորոգվել է 64 շքամուտք**, աշխատանքներն իրականացվել են մուտքերի բոլոր հարկաբաժիններում:

157 շենքերում ապակեպատվել է 460 քմ դուռ և պատուհան:
Վերանորոգվել է վթարային 12 **պատշգամբ:**

378 շենքերում նորոգվել է 485 **վերելակ:**
Տեղադրվել է մուտքերի նկուղի և աղբախցիկների 48 դուռ:



88 շենքերում **վերանորոգվել են** 15910 քմ ընդհանուր մակերեսով հարթ, 194 շենքերում՝ 9071 քմ ընդհանուր մակերեսով թեք **տանիքներ:**

197 շենքերում իրականացվել են 3836 գծմ ջրթափ **խողովակների նորոգման աշխատանքներ:** Ջերմամեկուսացվել է 1180 գծմ խողովակ: Մաքրվել և **նորոգվել են 2 շենքերի ճակատային հատվածներ**: 4 շենքերում իրականացավել են թափվող սալիկների տեղադրման աշխատանքներ:

Բակային տարածքների բարեկարգում

Շահագործման է հանձնվել 13 բակային տարածք:

Բարեկարգվել է 39 բակային տարածք:

Տեղադրվել են 27 մանկական և սպորտային խաղեր:

Շահագործման են հանձնվել Երվանդ Քոչար 15, Սայաթ-Նովա 37, 39 և Խանջյան 35-Թումանյան 2, 4 բակերի հարակից տարածքի

մինի ֆուտբոլի խաղադաշտերը:

35 բակերում նկարազարդվել է 671 քմ տարածք:

Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր», «Երևան Ջուր», «Երևան գազ» ՓԲԸ-ների հետ

4455 գծմ **արտաքին լուսավորության նոր ցանց է** անցկացվել Եղեռնի հուշահամալիրի տարածքում, վարչական շրջանի փողոցներում և բակերում:
Բազմաբնակարան շենքերի շքամուտքերում նորոգվել է 43000 գծմ **էլեկտրաէներգիայի մատակարարման համակարգ:**
Բակերում և փողոցներում տեղադրվել է 83 **հենասյուն:**

Վերանորոգվել է 1250 գծմ ընդհանուր երկարությամբ **կոյուղագիծ:**

Վերանորոգվել է 13950 գծմ **ջրամատակարարման համակարգը,** նորերով են փոխարինվել ջրատար համակարգի հանգույցները, փականները, կարգավորիչները և խողովակները:
Գազաֆիկացվել է թվով 35 բնակարան:

Տարաբնույթ սոցիալական ծրագրեր են իրականացվել «Մեծն Ներսես» ԲՀԿ-ի, «Ամքոր» հասարակական կազմակերպության, Գերմանական կարմիր խաչ, «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության, ինչպես նաև բազմաթիվ անհատ բարեգործների և բարերարների հետ:

Համագործակցության արդյունքում նյութական և պարենային աջակցություն և օգնություն է տրամադրվել վարչական շրջանի 715 սոցիալապես անապահով ընտանիքների:
Դպրոցներ և մանկապարտեզներ հաճախող 850 երեխաներ ստացել են գրենական պիտույքներ և պայուսակներ:

Հայրենական և Արցախյան պատերազմի վետերաններին և նրանց ընտանիքներին, խիստ կարիքավոր հաշմանդամներին, ինչպես նաև ազատամարտիկների կանանց տոների և հիշարժան տարելիցների կապակցությամբ ցուցաբերվել է նյութական և դրամական աջակցություն:

«Էրեբունի- Երևան 2797» տոնակատարության շրջանակում սոցիալապես անապահով տարբեր խմբերի 275 ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

Իրականացվել է վարչական շրջանից ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ զորամասերում ծառայող 222 ժամկետային զինծառայողների 384 ծնողների այցելությունը զորամասեր:

Ամանորյա տոների կապակցությամբ շուրջ 5500 ընտանիքի տրամադրվել են ամանորյա սննդամթերքի փաթեթներ, 3200 երեխայի հատկացվել են կոնֆետների փաթեթներ:
Դրամական օգնություն է ցուցաբերվել 800 ընտանիքի:
Միրիահայ շուրջ 155 ընտանիք ստացել է նյութական, պարենային և դրամական աջակցություն:
Սգո արարողությունների համար աջակցություն է ստացել 25 ընտանիք:

Բոլոր նորոգվող և հիմնանորոգվող փողոցներում, ինչպես նաև հանրային նշանակության շենքերի մուտքերում կառուցվել է 44 թեքահարթակ:

65 շահառու օգտվել է բարեգործական ճաշարանից:

Առողջապահության ոլորտ

Իրականացած առողջապահական ակցիաների շրջանակում վիրահատվել և անվճար բուժօգնություն է ստացել 70 քաղաքացի:

Առողջարանային ուղեգիր է տրամադրվել 53 բնակչի:
Պետպատվերի շրջանակում բուժման ուղեգիր է ստացել 8 քաղաքացի:
«Նատալի ֆարմ» ընկերության հետ համագործակցության արդյունքում 73 սոցիալապես անապահով բնակիչներ ստացել են դեղորայք ձեռք բերելու քարտեր:

Վարչական շրջանում գործող մանկապարտեզներ անվճար հիմունքով հաճախում է շուրջ 2530 երեխա:
Կազմակերպվել են տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, մարզական միջոցառումներ,
խաղեր, մրցույթներ, ինչպես նաև միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին:

Վարչական շրջանի մանկապարտեզների շուրջ 500 սաներ
«Խաղաղություն աշխարհի մանուկներին» խորագրով միջոցառմանը
պարային բեմադրություններով ներկայացրել են աշխարհի 18 պետությունները, այդ թվում՝ Հայաստանն ու Արցախը:

Հիմնանորոգվել է հ.10 մանկապարտեզը:
Նորոգման աշխատանքներ են իրականացվել հ.2, հ.5, հ.11 մանկապարտեզներում:
Նոր գույքով համալրելու ծրագրով թվով 21 մանկապարտեզների տրամադրվել է 53 երկհարկանի մահճակալ, 35 մանկական զգեստապահարան, 11 սառնարան և 109 խոհանոցային օգտագործման գույք:
Բոլոր 21 մանկապարտեզներն ամբողջությամբ ջեռուցվում են:

Կազմակերպվել է կենտրոնաբնակ 100 երեխաների հանգիստը Հանքավանի «Հասմիկ» ճամբարում:

Մշակույթի ոլորտ

2015 թվականին հիմնանորոգվել և շահագործման են հանձնվել.
- Քրիստափոր Քուշնարյանի անվան արվեստի դպրոցը,
- Ավ. Իսահակյանի անվան գրադարանի հ.15 և հ.21 մասնաճյուղերը:

Վարչական շրջանի արվեստի դպրոցներ և «Մանկապատանեկան ստեղծագործության և դաստիարակության գեղագիտական կենտրոն» է հաճախել շուրջ 814 աշակերտ:

Վարչական շրջանում կազմակերպվել են համերգներ, ցուցահանդեսներ, հանդիպումներ, ինչպես նաև ազգային տոներին, հայ և համաշխարհային դասականներին նվիրված տարաբնույթ միջոցառումներ:

«Երևանյան ամառ» ծրագրի շրջանակում կազմակերպվել է 13 բակային ճամբար: